

դրանաց, այլ եւ ողջոյն բանակք եւ տորմիդք Ե Խաչակրացն՝ խոտորեալք ՚ի ճանապարհէ Ասորոց, ընդդէմ յայտնի պատուիրանի նորին Քահանայապետի Իննովկենտեայ, երթան պաշարեն առնուն զԾարա. եւ ալեւոր դուքսն Վենետկոյ (Տանտոլոյ) մեծագոյն իրաւունս համարի նուաճել զապստամբեալն. եւ դարձեալ՝ սաղապեալ անտուստ թողլով զազատութիւն Սրբոյ երկրին՝ երթան կորզեն զԿոստանդնուպօլիս եւ զկայսերութիւն արեւելից. եւ ՚ի բողոքել անդ նուիրակաց Սրբազանին, ասեն, Ճանապարհ Երուսաղեմի ընդ այս է. ապա ՚ի գլուխ հանեալ զայս ամենայն եւ լցեալք աւարաւ եւ աշխարհաւ, ներողութիւն հայցեն ՚ի Հայրապետէն, ՚ի դերեւ հանեալ զպատեհն եւ զդիտումն նորա: Զայսոսիկ եւ զսոցին նմանս տեսեալ յարեւմտեայս, հաւատարմագոյն քան զնոսա եւ յաղթողագոյն գտաւ Լեւոն բարոյապէս. եւ այս յաղթութիւն՝ (որոց աւագ աչօք հայիցին) պայծառագոյն ճաճանչէ ՚ի հոյլս ականակուո թագի նորա, որով բարձր ՚ի գլուխ պանծայ եւ Մեծ հռչակեցաւ ՚ի ժամանակին յայնմ եւ յայժմուս, ակն ունիմ թէ եւ մինչեւ ՚ի սպառ:

Իսկ մեզ յետ հարկաւորելոյ կամաւ եւ ակամայ՝ ըստ երկարութեան խնդրոյս այսորիկ Անտիոքայ՝ դեգերել արտաքոյ բնիկ երկրի թագաւորիս մերոյ, արժան է ամենեւիմք՝ ՚ի ներքս ՚ի նոյն դառնալ, եւ տեսանել զնա յայլ եւ այլ դէպս եւ դէմս առտնին գործոց, որպէս զի ըստ կարի մերում ստուգագոյն եւս ծանիցուք որպիսի ոք էր Լեւոն: